



**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ N 10(151) «08»12.2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
	ԼՂՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՈՐՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ	
72	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 11-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ արդարադատության նախարարի N 100-Ն հրամանը.....	3
73	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 2015 թվականի հուլիսի 23-ի N 112-Ն հրամանի մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 6-Ն հրամանը.....	8
74	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 9-ի N 144-Ն հրամանի մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 7-Ն հրամանը.....	10
75	«Շինարարական աշխատանքների գործամիավորների վարձաչափերի ցանկը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2015 թվականի մարտի 30-ի N 73-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարի N 488-Ն հրամանը.....	12
ՀԱՏՈՒՎ ԲԱԺԻՆ		
	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից լիցենզիաներ տրամադրելու մասին որոշումների պատճենները.....	22
	Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից լիցենզիաների ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանների պատճենները.....	49
	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի	

	կողմից լիցենզիաներ տրամադրելու մասին հրամանների պատճենները.....	51
	Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կողմից հոկտեմբեր ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....	53
	Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից հոկտեմբեր ամսում դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....	54

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2017 թվականի նոյեմբերի «23»-ին
Պետական գրանցման համարը 1021769

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» նոյեմբերի 2017 թվական

N 100-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի ԹԻՎ 11-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագիրը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2009 թվականի փետրվարի 25-ի «Իրավական ակտերի պետական գրանցման գրանցամատյանի վարման կարգը և ձևը սահմանելու մասին» թիվ 11-Ն հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանի 2-րդ կետի՝

ա. 5-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) Արցախի Հանրապետության պետական նախարարի ու նախարարների հրամանների, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների հրամանների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումների, Ստեփանակերտի քաղաքապետի և Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարների որոշումների պետական գրանցման գրանցամատյանի ձևը՝ համաձայն թիվ 7 հավելվածի.»

2) հրամանի 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Արցախի Հանրապետության պետական նախարարի ու նախարարների հրամանների, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների հրամանների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումների, Ստեփանակերտի քաղաքապետի և Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարների որոշումների գրանցամատյաններում նշվում են նաև՝

1)պետական գրանցումը մերժված, փոփոխություններով նորից պետական գրանցման ուղարկված իրավական ակտի Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության մուտքի տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.

2)պետական գրանցման ենթակա իրավական ակտի վերաբերյալ պետական փորձագիտական եզրակացությունը ստորագրած պաշտոնատար անձի անունը, ազգանունը.

3)իրավական ակտի վերաբերյալ տրված պետական փորձագիտական եզրակացության թիվը.

4)պետական գրանցում ստացած իրավական ակտի վերադարձման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը:»,

3)հրամանի 2-րդ կետի՝

ա. 5-րդ ենթակետով սահմանված թիվ 6 հավելվածն ուժը կորցրած ճանաչել,

բ. 6-րդ ենթակետով սահմանված թիվ 7 հավելվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՈՒ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԻ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԻ, ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ».

4)հրամանի 2-րդ կետի 1-4-րդ և 7-րդ ենթակետերում, հրամանի 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածում, բացառությամբ թիվ 1 հավելվածի 5-րդ կետի, հրամանի 2-րդ կետի 1-4-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված թիվ 2-5 և թիվ 8 հավելվածներում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով,

5)հրամանի 2-րդ կետի 1-4-րդ և 6-7-րդ ենթակետերով սահմանված թիվ 2-5 և թիվ 7-8 հավելվածներում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «ԱՀ» հապավումով,

6)հրամանի 3-րդ կետով հաստատված թիվ 9 հավելվածը շարադրել նոր խմբագրության՝ համաձայն հավելվածի:

2.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա. ԴԱՆԻՆԵՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարի
2017 թվականի նոյեմբերի 23-ի N 100-Ն հրամանի

«Հավելված թիվ 9
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարի 2009 թվականի
փետրվարի «25» թիվ 11-Ն հրամանի

**ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱԿՏԵՐՆ
ԸՆԴՈՒՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԱՍԻՉՆԵՐԸ**

- 001. Արցախի Հանրապետության հանրաքվե
- 010. Արցախի Հանրապետության Ազգային ժողով (օրենքներ)
- 020. Արցախի Հանրապետության Ազգային ժողով (որոշումներ)
- 030. Արցախի Հանրապետության Գերագույն դատարան (որոշումներ)
- 040. Արցախի Հանրապետության Նախագահ (հրամանագրեր)
- 050. Արցախի Հանրապետության Նախագահ (կարգադրություններ)
- 060. Արցախի Հանրապետության կառավարություն (որոշումներ)
- 080. Արցախի Հանրապետության պետական նախարար (հրամաններ)
- 101. Արցախի Հանրապետության առողջապահության նախարար (հրամաններ)
- 102. Արցախի Հանրապետության արդարադատության նախարար (հրամաններ)
- 103. Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար (հրամաններ)
- 104. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարար (հրամաններ)
- 105. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարար (հրամաններ)
- 106. Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար (հրամաններ)
- 107. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար (հրամաններ)
- 108. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարար (հրամաններ)
- 110. Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարար (հրամաններ)
- 111. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարար (հրամաններ)
- 112. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար (հրամաններ)

113. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարար (հրամաններ)
200. Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրեն (հրամաններ)
207. Արցախի Հանրապետության ոստիկանության պետ (հրամաններ)
210. Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրեն (հրամաններ)
300. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով (որոշումներ)
301. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհուրդ (որոշումներ)
302. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ (որոշումներ)
303. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով (որոշումներ)
400. Ստեփանակերտի քաղաքապետ(որոշումներ)
401. Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավար (որոշումներ)
402. Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի վարչակազմի ղեկավար (որոշումներ)
403. Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավար (որոշումներ)
404. Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմի ղեկավար (որոշումներ)
405. Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավար (որոշումներ)
406. Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավար (որոշումներ)
407. Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի վարչակազմի ղեկավար (որոշումներ)
500. Արցախի Հանրապետության համայնքի ավագանի (որոշումներ)
501. Արցախի Հանրապետության համայնքի ղեկավար (որոշումներ)»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Կ. ՔՈՉԱՐՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2017 թվականի դեկտեմբերի 8-ին
Պետական գրանցման համարը 1121771

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«28» նոյեմբերի 2017 թվական

N 6-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 23-Ի
N 112-Ն ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասը և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի N164-Ն որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 2015 թվականի հուլիսի 23-ի «Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանից և կադաստրային գործից անշարժ գույքի միավորի վերաբերյալ տեղեկությունների միասնական քաղվածքի (միասնական տեղեկանքի) ձևը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2012 թվականի մայիսի 23-ի N 144-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 112-Ն հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Ա. Խաչատրյանին՝ սույն հրամանն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաստատված է
 Հավելված
 Արցախի Հանրապետության էկոնոմիկայի
 և արտադրական ենթակառուցվածքների նախարարի
 2017թ. նոյեմբերի 28-ի N 6-Ն հրամանով

«Հավելված
 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
 կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի
 2015 թվականի հուլիսի 23-ի N 112-Ն հրամանի

Արցախի Հանրապետության
 էկոնոմիկայի և արտադրական
 ենթակառուցվածքների
 նախարարության աշխատակազմի
 անշարժ գույքի
 կադաստրի վարչության
 _____ բաժին

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ
 N _____

Անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների
 վերաբերյալ

Անշարժ գույքի գտնվելու վայրը՝ _____
 Հողամասի ծածկագիրը՝ _____ Շինության ծածկագիրը՝ _____

1. Գրանցված իրավունքներ

Հ/հ	Իրավունքի սուբյեկտի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը (լրիվ անվանումը), բաժնեմասը	Հողամասի նկատմամբ			Շենք, շինությունների նկատմամբ		
		Նպատակային նշանակությունը	Իրավունքի տեսակը	Մակերեսը (հա)	Նպատակային նշանակությունը	Իրավունքի տեսակը	Ընդհանուր մակերեսը (քմ.)

2. Գույքային իրավունքների սահմանափակումներ

Հ/հ	Սահմանափակման տեսակը	Համառոտ նկարագրությունը	Կիրառման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը	Գրանցման ամսաթիվը

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ՝ _____

Տեղեկանքում տվյալները լրացված են « _____ » _____ թ. _____
 դրությամբ
 Միասնական տեղեկանքը ուժի մեջ է 15 օր
 Տրամադրվում է՝ _____

Տեղեկանքը պատրաստող պաշտոնատար անձ _____»:

Կ.Տ.

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Է. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2017 թվականի դեկտեմբերի 8-ին
Պետական գրանցման համարը 1121772

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«28» նոյեմբերի 2017 թվական

N 7-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-
ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N144-Ն ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասը և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 164-Ն որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 9-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում անշարժ գույքի գնահատողի մասնագիտական որակավորման ստուգման կարգը և անշարժ գույքի գնահատողի մասնագիտական որակավորման վկայականի ձևը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2013 թվականի մայիսի 20-ի N 93-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 144-Ն հրամանով հաստատված՝

1) N 1 հավելվածի՝

ա. 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմը (այսուհետ՝ աշխատակազմը)» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունը» բառերով,

բ. 4-րդ, 5-րդ կետերում, 6-րդ կետի 3-րդ ենթակետում և 27-րդ կետում «աշխատակազմի ղեկավար-նախարար» բառերը դրանց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար» բառերով դրանց համապատասխան հոլովաձևերով,

գ. «Ձև»-ում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար» բառերով:

2. N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Ա. Խաչատրյանին՝ սույն հրամանն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաստատված է
Հավելված
Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի
և արտադրական ենթակառուցվածքների նախարարի
2017թ. նոյեմբերի 28-ի N 7-Ն հրամանով

«Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի
2015 թվականի սեպտեմբերի 9-ի N 144-Ն հրամանի



**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ N ԱԳԳ _____**

Սույն վկայականը տրվում է

_____ - ին
(անունը, հայրանունը, ազգանունը)

Որակավորված
անձի լուսանկարը
3X4 սմ չափսի

առ այն, որ նա մասնակցել է Արցախի Հանրապետության
Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների
նախարարության կողմից կազմակերպված անշարժ գույքի
գնահատման գործունեության մասնագիտական որակավոր-
ման ստուգմանը և Արցախի Հանրապետության Էկոնոմի-
կայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի
20____ թվականի _____ -ի N _____ հրամանի
համաձայն ստացել է

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Գործողության ժամկետը մինչև՝ _____ 20____թ.

**Արցախի Հանրապետության
Էկոնոմիկայի և արտադրական
ենթակառուցվածքների նախարար**

_____ (ստորագրություն)

_____ (անունը, ազգանունը)

Վ.Տ.

_____ 20__ թ.

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

Է. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
«23» նոյեմբերի 2017 թվականին
Պետական գրանցման համարը 1101770

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«9» նոյեմբերի 2017թ.

N 488-Ն

ք. Ստեփանակերտ

**ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ՎԱՐՁԱՉԱՓԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 73-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Քաղաքաշինության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10¹, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածներին համապատասխան և հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 24-ի N 87-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել շինարարական աշխատանքների գործամիավորների վարձաչափերի ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ ցանկում չներառված աշխատանքների գործամիավորների այն վարձաչափերը, որոնք էական տարբերվում են շուկայական գներից և 1984 թվականին գործող աշխատանքների գործամիավորների վարձաչափերից՝ համաձայնեցնել Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության հետ:
3. Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման և վարչատնտեսական բաժնի պետին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
4. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2015 թվականի մարտի 30-ի «Շինարարական աշխատանքների գործամիավորների վարձաչափերի ցանկի հաստատման մասին» N 73-Ն հրամանը:
5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կ. ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ց Ա Ն Կ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՎԱՐՁԱՉԱՓԵՐԻ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՈՐՏԸ

1. Շինարարական աշխատանքների գործամիավորների վարձաչափերի ցանկը կիրառվում է Արցախի Հանրապետության տարածքում իրականացվող՝ նոր օբյեկտների շինարարության, գոյություն ունեցող օբյեկտների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, ընդլայնման, արդիականացման, հիմնանորոգման աշխատանքների վարձաչափերի որոշման համար:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2. Առանձին տեսակի աշխատանքների աշխատավարձի, մեքենաների շահագործման և նյութերի ծախսերի ցուցանիշները մշակվել են Արցախի Հանրապետության տարածքում գործող շինարարական կազմակերպությունների կողմից կիրառվող գների և նորմերի ուսումնասիրությունների արդյունքում՝ շուկայում գործող գնային քաղաքականությանը համաձայն, մասնավորապես՝ Արցախի Հանրապետությունում գործող աշխատանքների արտադրության տեխնոլոգիայի և նախկին գործող նորմերի (շինարարական նորմեր և կանոններ) ճշգրտմամբ:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՎԱՐՉԱԶԱՓԵՐԻ

№	Աշխատանքի անվանումը	Հիմնավորում	Չափման միավորը	Աշխատավարձ	ՄՄՇ	Նյութեր		
						Անվանումներ	Չափ. միավորը	Ծախսը
1	2	3	4	5	6	7	8	9
1	III կարգի գրունտի մշակում ձեռքով	L1-1	մ ³	2.76				
2	II կարգի գրունտի հետլիցք ձեռքով	L1-1-1	մ ³	1.36				
3	IV կարգի գրունտի մշակում ձեռքով	L1-2	մ ³	4.87				
4	III կարգի գրունտի հետլիցք ձեռքով	L1-2-1	մ ³	1.66				
5	III կարգի գրունտներում փոսերի քանդում ձեռքով	L1-3	մ ³	5.14				
6	IV կարգի գրունտներում փոսերի քանդում ձեռքով	L1-4	մ ³	9.23				
7	Խամքար բետոնե հիմքերի պատրաստում	L6-1	մ ³	7.05	1.86	Բետոն Խամքար Կաղապարամած Տախտակ Մեխ Լար	մ ³ մ ³ մ ² մ ³ կգ կգ	0.71 0.44 0.177 0.002 0.174 0.11
8	Բետոնե հիմքերի պատրաստում	L6-2	մ ³	7.00	2.05	Բետոն Կաղապարամած Տախտակ Մեխ Լար	մ ³ մ ² մ ³ կգ կգ	1.02 0.177 0.004 0.256 0.11
9	Ե/բետոնե միաձույլ հիմքերի պատրաստում	L6-3	մ ³	11.27	2.48	Բետոն Կաղապարամած Տախտակ Մեխ Լար	մ ³ մ ² մ ³ կգ կգ	1.015 0.117 0.0022 0.238 0.125
10	Խամքարբետոնե պատերի պատրաստում	L6-4	մ ³	7.13	0.81	Բետոն Խամքար Կաղապարամած Տախտակ Մանեկ/հեղյուս Մեխ	մ ³ մ ³ մ ² մ ³ կգ կգ	0.71 0.44 0.107 0.0051 0.104 0.424
11	Բետոնե պատերի պատրաստում	L6-5	մ ³	8.65	0.89	Բետոն Կաղապարամած Տախտակ Մանեկ/հեղյուս Մեխ	մ ³ մ ² մ ³ կգ կգ	1.02 0.107 0.0051 0.104 0.424
12	Ե/բետոնե միաձույլ պատերի պատրաստում մինչև 200մմ	L6-6	մ ³	12.73	3.86	Բետոն Կաղապարամած Տախտակ Մանեկ/հեղյուս	մ ³ մ ² մ ³ կգ	1.015 0.448 0.0173 0.263

	հաստության					Մեխ	կգ	1.28
13	Ե/բետոնե միաձույլ պատերի պատրաստում մինչև 300մմ հաստության	L6-6-1	մ ³	12.12	3.08	Բետոն Կաղապարամած Տախտակ Մանեկ/հեղուս Մեխ	մ ³ մ ² մ ³ կգ կգ	1.015 0.299 0.0116 0.26 0.86
14	Ե/բետոնե միաձույլ պատերի պատրաստում մինչև 500մմ հաստության	L6-6-2	մ ³	11.74	2.67	Բետոն Կաղապարամած Տախտակ Մանեկ/հեղուս Մեխ	մ ³ մ ² մ ³ կգ կգ	1.015 0.179 0.007 0.257 0.51
15	Ե/բետոնե միաձույլ գոտիների պատրաստում	L6-7	մ ³	13.65	2.86	Բետոն Կաղապարամած Տախտակ Մեխ	մ ³ մ ² մ ³ կգ	1.015 0.224 0.0044 0.496
16	Ե/բետոնե միաձույլ բարավորների պատրաստում	L6-8	մ ³	14.43	3.02	Բետոն Կաղապարամած Տախտակ Մեխ	մ ³ մ ² մ ³ կգ	1.015 0.373 0.007 0.754
17	Ե/բետոնե միաձույլ սյուների պատրաստում պարագիծը մինչև 3մ, բարձրությունը մինչև 3մ	L6-9	մ ³	12.08	7.21	Բետոն Կաղապարամած Մեխ Տախտակ	մ ³ մ ² կգ մ ³	1.015 0.2126 0.224 0.00344
18	Ե/բետոնե միաձույլ սյուների պատրաստում պարագիծը մինչև 3մ, բարձրությունը մինչև 6մ	L6-9-1	մ ³	12.60	6.48	Բետոն Կաղապարամած Մեխ Տախտակ	մ ³ մ ² կգ մ ³	1.015 0.2126 0.224 0.00344
19	Ե/բետոնե միաձույլ սյուների պատրաստում պարագիծը մինչև 2մ, բարձրությունը մինչև 3մ	L6-10	մ ³	12.67	9.07	Բետոն Կաղապարամած Մեխ Տախտակ	մ ³ մ ² կգ մ ³	1.015 0.306 0.4452 0.0086
20	Ե/բետոնե միաձույլ հեծանների պատրաստում	L6-11	մ ³	14.67	3.27	Բետոն Կաղապարամած Փայտե սյուներ Տախտակ Մեխ Լար	մ ³ մ ² մ ³ մ ³ կգ կգ	1.015 0.341 0.002 0.0067 0.693 0.187
21	Ե/բետոնե միաձույլ ծածկի պատրաստում	L6-12	մ ³	21.81	2.19	Բետոն Կաղապարամած Փայտե սյուներ Տախտակ Մեխ Լար	մ ³ մ ² մ ³ մ ³ կգ կգ	1.015 0.187 0.0063 0.02 0.791 0.07
22	Կամարե և թաղե կոնստրուկցիաներ բետոնով մինչև 6մ բարձրությամբ	L6-13	մ ³	14.18	2.17	Բետոն Կաղապարամած Տախտակ Մեխ Լար	մ ³ մ ² մ ³ կգ կգ	1.015 1.73 0.071 1.39 0.44
23	Կամարե և թաղե կոնստրուկցիաներ բետոնով 6մ ավել բարձրությամբ	L6-14	մ ³	19.89	2.23	Բետոն Կաղապարամած Տախտակ Մեխ Լար	մ ³ մ ² մ ³ կգ կգ	1.015 1.73 0.071 1.39 0.44
24	Բետոնե նախապատրաստ ական շերտ	L6-15	մ ³	8.42	0.76	Բետոն	մ ³	1.02
25	20-40մմ հաստությամբ ցեմենտյա հարթեցնող շերտի	L11-1	մ ²	0.85	0.05	Շաղախ ցեմենտե	մ ³	0,0204- 0,0408

	պատրաստում							
26	Պատի շարվածք խամքարից	L8-1	մ ³	10.57	1.13	Խամքար Շարի շաղախ	մ ³ մ ³	1.03 0.36
27	Պատի շարվածք կրաքարից՝ 39սմ հաստությամբ	L8ձ-2	մ ²	2.66	0.38	Քար խորանարդիկ Շարի շաղախ	հատ մ ³	27 0.052
28	Պատի շարվածք կրաքարից՝ 19սմ հաստությամբ	L8ձ-1	մ ²	1.51	0.27	Քար խորանարդիկ Շարի շաղախ	հատ մ ³	14 0.0173
29	Պատի շարվածք կրաքարից	L8-1-1	մ ³	4.74	0.59	Քար խորանարդիկ Շարի շաղախ	հատ մ ³	65 0.13
30	Պատերի շարվածք թեթևաբետոն բլոկներից՝ 10սմ հաստությամբ	L8-2	մ ²	0.97	0.17	Թեթևաբետոն բլոկներ Շարի շաղախ	հատ մ ³	13 0.0093
31	Պատերի շարվածք թեթևաբետոն բլոկներից՝ 20սմ հաստությամբ	L8-3	մ ²	0.97	0.17	Թեթևաբետոն բլոկներ Շարի շաղախ	հատ մ ³	13 0.0186
32	Պատերի շարվածք թեթևաբետոն բլոկներից՝ 40սմ հաստությամբ	L8-4	մ ²	1.71	0.24	Թեթևաբետոն բլոկներ Շարի շաղախ	հատ մ ³	26 0.0372
33	Պատի շարվածք «ԼԵԳՈ» տիպի աղյուսից՝ 15սմ հաստությամբ	L8-5	մ ²	0.75	0.10	«ԼԵԳՈ» աղյուս Սոսինձ արտաքին աշխատանքների համար	հատ կգ	34 2.13
34	Պատի շարվածք «ԼԵԳՈ» տիպի աղյուսից՝ 30սմ հաստությամբ	L8-6	մ ²	0.90	0.12	«ԼԵԳՈ» աղյուս Սոսինձ արտաքին աշխատանքների համար	հատ կգ	68 4.25
35	Պատի շարվածք «ԼԵԳՈ» տիպի աղյուսից՝ 45սմ հաստությամբ	L8-7	մ ²	1.05	0.14	«ԼԵԳՈ» աղյուս Սոսինձ արտաքին աշխատանքների համար	հատ կգ	102 6.25
36	Բնական քարից հատակներ՝ հղկված սալերից	L11-2	մ ²	4.56	0.12	Բնական քարից հղկված սալեր Ցեմենտե շաղախ	մ ² մ ³	1.02 0.028
37	Բնական քարից հատակներ՝ փայլեցված սալերից	L11-3	մ ²	5.38	0.12	Բնական քարից փայլեցված սալեր Ցեմենտե շաղախ	մ ² մ ³	1.02 0.028
38	Բնական քարից պատերի երեսապատում՝ հղկված սալերից	L15-1	մ ²	5.92	0.14	Բնական քարից հղկված սալեր Մետաղական դետալներ Ցեմենտե շաղախ	մ ² կգ մ ³	1.01 1.5 0.025
39	Բնական քարից պատերի երեսապատում՝ փայլեցված սալերից	L15-2	մ ²	6.74	0.14	Բնական քարից փայլեցված սալեր Մետաղական դետալներ Ցեմենտե շաղախ	մ ² կգ մ ³	1.01 1.5 0.025
40	Բնական քարից աստիճանների և աստիճանաձևակա տների երեսապատում՝ հղկված սալերից	L15-3	զծմ	3.74	0.04	Բնական քարից հղկված սալեր Նույնը, աստիճանաձևակա տների Ցեմենտե շաղախ	զծմ զծմ մ ³	1.01 1.01 0.009
41	Բնական քարից աստիճանների և աստիճանաձևակա տների երեսապատում՝ փայլեցված սալերից	L15-4	զծմ	4.57	0.04	Բնական քարից փայլեցված սալեր Նույնը, աստիճանաձև- կատների Ցեմենտե շաղախ	զծմ զծմ մ ³	1.01 1.01 0.009
42	Բնական քարից թասակների/պատ	L15-5	զծմ	3.63	0.06	Բնական քարից սալեր	զծմ	1.0

	ուհանագոգերի տեղադրում մինչև 0,5մ լայնության					Ցեմենտե շաղախ (10սմ թասակի/պատուհանագոգի լայնության դեպքում)	մ ³	0.0015
43	Բետոնե/բնական քարից եզրաքարերի տեղադրում	L27-1/ L27-2	գծմ	1.39	0.0192	Եզրաքարեր Բետոն M200 (80/100/150 180/200 սմ եզրաքարերի լայն. դեպքում)	գծմ մ ³	1.0 0,048/0,05 /0,055 0,058/0,060
44	Պատերի և առաստաղների երեսպատում «Ալիկարոնո» տեսակի թիթեղով	L9-1	մ ²	7.48	0.46	«Ալիկարոնո» թիթեղ Պրոֆիլ Պտուտակ	մ ² գծմ հատ	1.02 4.00 12.0
45	28/36սմ հաստությամբ տախտակե հատակների պատրաստում	L11-4	մ ²	0.95	0.13	Հատակի տախտակ Շրիշակ Մեխ	մ ³ գծմ կգ	0,0288/0,0371 0.95 0,125/0,22
46	Լամինատե հատակների պատրաստում	L11-5	մ ²	0.94	0.08	Լամինատ Մեխ Շրիշակ	մ ² կգ գծմ	1.02 0.036 0.95
47	Նրբատախտակից հիմքի պատրաստում	L11-6	մ ²	0.91	0.11	Նրբատախտակ Պտուտակ Սոսինձ	մ ² հատ կգ	1.025 16.00 1.20
48	Մանրատախտակից հատակ նրբատախտակե հիմքի վրա	L11-7	մ ²	3.08	0.08	Մանրատախտակ Շրիշակ Սոսինձ	մ ² գծմ կգ	1.015 0.95 0.8
49	Մանրատախտակի հղկատաշում և լաքաքսում 2 անգամ	L14-1 L11-8	մ ²	1.80	0.01	Լաք մանրատախտակի Ձմռնիտե թուղթ	կգ մ ²	0.32 0.2
50	GERFLOR TARAFLEX SPORT MAPLE DESIGN հոմոգեն վինիլային հատակի (առանց շրիշակների) տեղադրում	L11-10	մ ²	2.00	0.00	Հեղուկ PRIMER G գրունտովկա Բնքնահարթեցնող հատակի շաղախ մինչև 3սմ Սոսինձ վինիլային հատակի համար Վինիլային հատակ TARAFLEX SPORT MAPLE DESIGN Ջողող լաքեր վինիլի համար	լ կգ կգ մ ² հատ	0.067 5.33 0.433 1.1 0.01
51	GERFLOR MIPOLAM COSMO հոմոգեն վինիլային հատակի (առանց շրիշակների) տեղադրում	L11-10-1	մ ²	2.00	0.00	Հեղուկ PRIMER G գրունտովկա Բնքնահարթեցնող հատակի շաղախ մինչև 3սմ Սոսինձ վինիլային հատակի համար Վինիլային հատակ MIPOLAM COSMO Ջողող լաքեր վինիլի համար	լ կգ կգ մ ² հատ	0.067 5.33 0.433 1.1 0.01
52	Պատերի գաջի բարձրրակ սվաղ	L15-6	մ ²	1.26	0.10	Գաջ	կգ	30
53	Առաստաղի գաջի բարձրրակ սվաղ	L15-7	մ ²	1.27	0.10	Գաջ	կգ	31.5
54	Պատերի գաջի բարձրրակ սվաղ	L15-6-1	մ ²	1.108	0.08	Գաջ	կգ	22.5
55	Առաստաղի գաջի բարձրրակ սվաղ	L15-7-1	մ ²	1.11	0.08	Գաջ	կգ	23.6

56	Հարթ շեղերի սվաղում գաջով	L15-8	մ ²	2.79	0.26	Գաջ	կգ	50
57	Պատերի բարձրորակ ցեմենտե սվաղ	L15-9	մ ²	1.44	0.20	Շաղախ սվաղի Մետաղական ցանց	մ ³ մ ²	0.0244 0.052
58	Առաստաղի բարձրորակ ցեմենտե սվաղ	L15-10	մ ²	1.45	0.20	Շաղախ սվաղի Մետաղական ցանց	մ ³ մ ²	0.0256 0.0528
59	Հարթ շեղերի սվաղում ցեմենտե շաղախով	L15-11	մ ²	2.75	0.22	Շաղախ սվաղի	մ ³	0.042
60	Պատի բարձրակ սվաղ ցեմենտե շաղախով	L15-9-1	մ ²	1.276	0.18	Շաղախ սվաղի Մետաղական ցանց	մ ³ մ ²	0.0175 0.026
61	Առաստաղի բարձրակ սվաղ ցեմենտե շաղախով	L15-10-1	մ ²	1.28	0.18	Շաղախ սվաղի Մետաղական ցանց	մ ³ մ ²	0.0184 0.0264
62	Պատի սվաղ ցեմենտե շաղախով երեսապատման համար	L15-14	մ ²	1.17	0.17	Շաղախ սվաղի Մետաղական ցանց	մ ³ մ ²	0.014 0.028
63	Պատերի, առաստաղների սվաղ գիպսոնիտով	L15-27	մ ²	1.26	0.10	Գիպսոնիտ (յուր. 1սմ հաստ. դեպքում)	կգ	11
64	Ճակատների բարձրորակ սվաղ ցեմենտե շաղախով	L15-12	մ ²	1.40	0.01	Շաղախ սվաղի	մ ³	0.0246
65	Շեղերի բարձրորակ սվաղ ցեմենտե շաղախով	L15-13	գծմ	0.87	0.03	Շաղախ սվաղի (20սմ շեղի լայնության դեպքում)	մ ³	0.007
66	Դեկորատիվ սվաղ «Կոռոյեդ»	L15-25	մ ²	2.50	0.03	Դեկորատիվ սվաղ «Կոռոյեդ» շմմ CERESIT CT 75 Նախաներկ CERESIT CT16	կգ լ	2.7 0.5
67	Պատերի բարձրորակ յուղաներկում	L15-15	մ ²	1.19	0.02	Յուղաներկ Օլիֆ Ծեփամածիկ Զմռնիտե թուղթ	կգ կգ կգ մ ²	0.251 0.128 0.794 0.0088
68	Առաստաղի բարձրորակ յուղաներկում	L15-16	մ ²	1.22	0.04	Յուղաներկ Օլիֆ Ծեփամածիկ Զմռնիտե թուղթ	կգ կգ կգ մ ²	0.275 0.143 0.92 0.0088
69	Հատակների բարձրորակ յուղաներկում	L15-17	մ ²	1.19	0.003	Յուղաներկ Օլիֆ Ծեփամածիկ Զմռնիտե թուղթ	կգ կգ կգ մ ²	0.238 0.118 0.823 0.0088
70	Մետաղական մակերևութների (բացառությամբ տանիքների) յուղա/հակակոռոզ իոն ներկում 2 անգամ	L15-26	մ ²	0.93	0.001	Յուղա/Հակակոռոզ իոն ներկ Օլիֆ	կգ կգ	0.244 0.029
71	Պատերի բարձրորակ ներկում լատեքսով	L15-18	մ ²	1.18	0.03	Լատեքս Ծեփամածիկ Գուաշ Զմռնիտե թուղթ	կգ կգ մլ մ ²	0.395 0.79 6.6 0.0088
72	Առաստաղի բարձրորակ ներկում լատեքսով	L15-19	մ ²	1.21	0.03	Լատեքս Ծեփամածիկ Գուաշ Զմռնիտե թուղթ	կգ կգ մլ մ ²	0.395 0.92 6.6 0.0088

73	Պատերի բարորակ ներկում լատեքսով	L15-18-1	մ ²	0.97	0.02	Լատեքս Ծեփամածիկ Գուաշ Զմռնիտե թուղթ	կգ կգ մլ մ ²	0.395 0.5 6.6 0.0084
74	Առաստաղի բարորակ ներկում լատեքսով	L15-19-1	մ ²	0.98	0.03	Լատեքս Ծեփամածիկ Գուաշ Զմռնիտե թուղթ	կգ կգ մլ մ ²	0.395 0.55 6.6 0.0084
75	Պաստառների սոսնձում	L15-20	մ ²	0.88	0.003	Պաստառ Ծեփամածիկ Սոսինձ	մ ² կգ կգ	1.12 0.5 0.0292
76	Պաստառների սոսնձում՝ ներկելով	L15-21	մ ²	1.54	0.003	Պաստառ Ծեփամածիկ Սոսինձ Ներկ	մ ² կգ կգ կգ	1.12 0.5 0.0292 0.25
77	Ճակատների բարձրորակ ներկում	L15-22	մ ²	1.29	0.03	Ճակատի ներկ Ծեփամածիկ Գուաշ Զմռնիտե թուղթ	կգ կգ մլ մ ²	0.395 0.79 6.6 0.0088
78	Պատերի/առաստաղների կրաներկում	L15-23	մ ²	0.26	0.001	Կիր Գուաշ՝ ըստ անհրաժեշտության	կգ մլ	0,165/0,18 3 6.6
79	Պատերի երեսապատում խեցեսալերով	L15-24	մ ²	3.79	0.05	Խեցեսալեր Սոսինձ	մ ² կգ	1.0 5.0
80	Հատակներ խեցեսալերից	L11-9	մ ²	3.62	0.12	Հատակի խեցեսալեր Սոսինձ	մ ² կգ	1.02 5
81	Տանիքի պատրաստում մետաղաձուլվածքներից մետաղական կավարամածի հետ	L9-2	մ ²	2.47	0.27	Մետաղաձուլվածք համաձայն նախագծի		
						Էլեկտրոդ (1տն մետաղաձուլվածքի համար)	կգ	15
82	Տանիքի պատրաստում մետաղաձուլվածքներից առանց մետաղական կավարամածի	L9-2-1	մ ²	2.06	0.22	Մետաղաձուլվածք համաձայն նախագծի		
						Էլեկտրոդ (1տն մետաղաձուլվածքի համար)	կգ	15
83	0,5մմ թիթեղի հաստությամբ պատի ջրհորդանի պատրաստում ցվիկի հետ	L12-1	գծմ	2.17	0.18	Ցինկապատ թիթեղ	կգ	6.2
						0,5մմ Կովածք	կգ	1
						Մեխ	կգ	0.139
						Տախտակ հաստ.4սմ	մ ³	0.028
84	Կախովի ջրհորդանի տեղադրում	L12-2	գծմ	0.70	0.01	Ջրհորդան կախովի Հարթ ցինկապատ թիթեղ Բարձակ	մ մ ² հատ	1.05 0.2 2
						Ջրհորդանի դետալներ	հատ	համաձայն նախագծի
						Պտուտակ	հատ	8
85	Մետաղակղմինդրից տանիքի ծածկ	L9-3	մ ²	0.71	0.41	Մետաղակղմինդր Պտուտակ	մ ² հատ	1.18 6.0
86	Մետաղակղմինդրից տանիքի ծածկ՝ տանիքի բարդ կոնստրուկցիաների դեպքում	L9-4	մ ²	0.87	0.41	Պտուտակ	մ ² հատ	1.25 8
87	Պրոֆիլավոր թիթեղից տանիքի	L9-5	մ ²	0.54	0.41	Պրոֆիլավոր թիթեղ Պտուտակ	մ ² հատ	1.15 6

	ծածկ							
88	0,5մ հաստությամբ հարթ ցինկապատ թիթեղից տանիքածածկի պատրաստում առանց ջրհորդանի	L12-3	մ ²	0.94	0.01	Հարթ ցինկապատ թիթեղ 0,5մ Մեխ տանիքի	կգ/մ ² կգ	4,6/1,173 0.06
89	0,5մ հաստությամբ հարթ ցինկապատ թիթեղից տանիքածածկի փոքր ծածկությունների պատրաստում	L12-3-1	մ ²	0.94	0.01	Հարթ ցինկապատ թիթեղ 0,5մ Մեխ տանիքի	կգ կգ	4.12 0.04
90	Մետաղակղմինդր ից, պրոֆիլավոր թիթեղից տանիքի ծածկի ներկում 2 անգամ	L12-4	մ ²	1.27	0.00	Ցինկապատ տանիքի ներկ Լուծիչ/ուսյտ սպիրիտ	կգ լիտր	0.3 0.125
91	MDF (Էմ-Դե-Էֆ), փայտե, մետաղական դռների տեղադրում	L10-1	մ ²	3.67	0.35	Դռան բլոկ Հեյդուս խարիսխային Մոնտաժ. փրփուր 750մլ	մ ² հատ հատ	1.0 3.0 0.5
92	Մայթի բետոնե սալիկների տեղադրում	L16-1	մ ²	1.71	0.41	Բետոնե սալիկներ Ցեմենտե շաղախ	մ ² մ ³	1.0 0.015
93	Կախովի առաստաղ պլաստիկատից	L10-2	մ ²	1.40	0.05	Պլաստիկատ Պտուտակ խցանով Պրոֆիլ մետաղական Պրոֆիլ պլաստմասե Պտուտակ մետաղական կմախքի համար Պտուտակ	մ ² հատ զծմ զծմ հատ հատ	1.02 2 3.2 1.05 8 17
94	Գիպսաստվարաթ ղթից մինույն մակարդակի վրա առաստաղների իրականացում մետաղե կմախքի հետ	L10-3	մ ²	1.40	0.05	ԳՄԹ սալ Պտուտակ խցանով Պրոֆիլ մետաղական Պտուտակ մետաղական կմախքի համար Պտուտակ ԳՄԹ համար	մ ² հատ զծմ հատ հատ	1.02 2 4 10 17
95	Գիպսաստվարաթ ղթից, երկու և ավելի մակարդակի վրա, առաստաղների իրականացում մետաղե կմախքի հետ	L10-3-1	մ ²	2.20	0.10	Համաձայն նախագծի		
96	Սանտեխնիկայի և ջեռուցման սարքերի տեղադրում	L17-1	1 սարք*	4.05	0.47	Սարքեր համաձայն նախագծի		

Ծանոթություն

* Սարք է համարվում զուգարանակոնքեր, լոգոնոցներ, լվացարանները խառնիչի հետ միասին, ջեռուցման մարտկոցներ ու նմանատիպ սարքեր, էլեկտրական և գազային ջրատաքացուցիչներ:
Սարքի տեղադրման աշխատավարձը նախատեսված է առանց խողովակաշարերի տեղադրման:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ա. ՀՈՒՌՈՒՄՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հոկտեմբերի 2017 թվականի

N 54-Ա

ք. Ստեփանակերտ

**«ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ԼԵՎ-2» ՓՈՔՐ
ՀԻՂՐՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՑԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱՊՐՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետը, 17-19-րդ և 29-րդ հոդվածները և հաշվի առնելով «ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2017 թվականի սեպտեմբերի 22-ին ներկայացված հայտը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ռ ր ռ շ ու մ է**.

1. Բավարարել «ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Եղեգնուտ և Նոր Գետաշեն համայնքների վարչական տարածքներում (Թարթառ գետի ձախակողմյա վտակ Լև գետի 1302 մետրից 1208 մետր գետահատվածների միջև (բնական ջրահոսք))՝ «ԼԵՎ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2034 թվականի օգոստոսի 16-ը գործողության ժամկետով, որից՝ կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2019 թվականի օգոստոսի 16-ը:

2. Հաստատել «ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «ԼԵՎ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄՍՆՅԱՆ

Հավելված
Հաստատված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2017 թվականի հոկտեմբերի 30-ի N 54-Ս որոշմամբ

**«ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
«ԼԵՎ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության
լիցենզիայի**

Պայմանները

**(Լիցենզիա 0006, տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և
տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի
30-ի N 54-Ս որոշմամբ)**

1. ԼԻՑԵՆԶԻԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն լիցենզիայում օգտագործված հասկացություններն են.

1) **Հանձնաժողով**՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

2) **Լիցենզավորված անձ**՝ «ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.

3) **Լիցենզիա**՝ Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն իրականացնելու վերջինիս իրավունքն ու պարտականությունը.

4) **Շուկայի կանոններ**՝ Հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար փաստաթուղթ, որով կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական համակարգում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները, համակարգի հուսալիության և անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմները.

5) **Ֆորս-մաժոր**՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2017 թվականի հոկտեմբերի 30-ից:

3. Լիցենզիան գործում է մինչև 2034 թվականի օգոստոսի 16-ը, որից՝

1) մինչև 2019 թվականի օգոստոսի 16-ը կառուցման ժամանակահատվածն է,

2) մինչև 2034 թվականի օգոստոսի 16-ը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:

4. Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ժամանակահատվածը (ժամկետը) երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

**3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ**

5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Եղեգնուտ և Նոր Գետաշեն համայնքների վարչական տարածքներն են՝ Թարթառ գետի ձախակողմյա վտակ Լև գետի վրա (բնական ջրահոսք):

**4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՑԹՆԵՐԸ**

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 4,186 մեգավատտ հաշվարկային հզորությամբ «ԼԵՎ-2» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:

**5. ՓՈՔՐ ՀԻԴՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՑԱՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- 1) ջրառի և ջրահեռացման նիշերն են՝ 1302,0 մ և 1208,0 մ.
- 2) հաշվարկային էլք՝ 7,0 մ³/վ.
- 3) հաշվարկային ճնշում՝ 74,9 մ.
- 4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 4,186 մեգավատտ:

8. Լիցենզիայի գործողության ընթացքում «ԼԵՎ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

9. «ԼԵՎ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտից հետո էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվելու է հետևյալ սարքավորումներով՝

- 1) գեներատորներ,
- 2) հիդրոտուրբիններ:

6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարելու, զիջելու կամ այլ կերպ փոխանցելու մեկ այլ անձի:

12. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

14. Լիցենզավորված անձը լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր դառնալու կամ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ միավորվելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

15. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը նույն կամ մեկ այլ լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս ձեռք բերելու կամ փայլամասնակցություն ունենալու, ինչպես նաև 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր վաճառելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

16. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու օրվանից 15 աշխատանքային օր առաջ Լիցենզավորված անձն այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

17. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Արցախի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների, էներգատեղակայանքների և գծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:

21. Բացառությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների եզրակացությունների (ակտերի), Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը)՝ եզրակացությունների (ակտերի) ստացման պահից 23 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

26. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցելու, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

27. Այն դեպքում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Լիցենզավորված անձի կամ այլ անձանց կողմից ներկայացված որևէ հայտ, հարցադրում կամ դիմում-բողոք, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հաղորդագրություն կամ տեղեկատվություն, Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի պահանջով, պարտավոր է ներկայացնել սպառիչ տեղեկատվություն:

28. Լիցենզավորված անձը պարտավոր է տասն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

29. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2018 թվականի սեպտեմբերի 1-ը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «ԼԵՎ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագիծը և նախահաշիվը, նախագծի տեխնիկական և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննությունները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգի համաձայն ստացված՝ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալու տեխնիկական պայմանների պատճենը:

30. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ համաձայն Արցախի Հանրապետության օրենսդրության և առաքել էլեկտրական էներգիան էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձին:

31. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև Լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի

կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

32. Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի սակագները սահմանում է Հանձնաժողովը: Մակագների սահմանումն ու վերանայումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

33. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հանձնաժողով ներկայացնելու այդ մասով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

34. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված էներգամատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին կամ պարտադիր պայմաններին: Այդ պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

35. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՅՎՈՒՄ

36. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

37. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

38. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչին:

39. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ներքին կանոնակարգը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8. ՏՈՒՇԱՆՔՆԵՐԸ

40. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

1) նախազգուշացում.

2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ.

3) Լիցենզիայի գործողության կասեցում.

4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

41. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

42. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ Լիցենզիայի 40-րդ կետի համաձայն, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս-մաժորի հետևանք են:

9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

43. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

44. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ Լիցենզիայի վերաձևակերպման համար:

Ի վկայություն սույնի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը սույն Լիցենզիան տրամադրել է՝

«ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
(ընկերության անվանումը)

ԱՀ. ք. Ստեփանակերտ, Այ. Հեքիմյան փողոց 14^ա, բն. 19
(գտնվելու վայրը)

Գործունեության վայրը.

Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Եղեգնուտ և Նոր Գետաշեն համայնքների վարչական տարածքներն են:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«30» հոկտեմբերի

2017 թվականի N 55-Ա

ք. Ստեփանակերտ

**«ՏՈՒՄ-ՀԷԿ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
«ՏՈՒՄ» ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՑԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ
ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետը, 17-19-րդ և 29-րդ հոդվածները և հաշվի առնելով «ՏՈՒՄ-ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2017 թվականի հոկտեմբերի 2-ին ներկայացված հայտը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Բավարարել «ՏՈՒՄ-ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած հայտը և տրամադրել Արցախի Հանրապետության Հաղրուփի շրջանի Մեծ Թաղեր համայնքի վարչական տարածքում՝ Իշխանազետի վրա (օգտագործելով գետի 761 մետրից 693 մետր գետահատվածքը (բնական ջրահոսք))՝ «ՏՈՒՄ» փոքր հիդրոէլեկտրակայանում, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2034 թվականի սեպտեմբերի 13-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2019 թվականի սեպտեմբերի 13-ը:

2. Հաստատել «ՏՈՒՄ-ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «ՏՈՒՄ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Հաստատված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2017 թվականի հոկտեմբերի 30-ի N 55-Ա որոշմամբ

**«ՏՈՒՄ-ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «ՏՈՒՄ»
փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության)
արտադրության լիցենզիայի**

Պայմանները

**(Լիցենզիա 0007, տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և
տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի
30-ի N 55-Ա որոշմամբ)**

1. ԼԻՑԵՆԶԻԱՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն լիցենզիայում օգտագործված հասկացություններն են.

1) **Հանձնաժողով**՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

2) **Լիցենզավորված անձ**՝ «ՏՈՒՄ-ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.

3) **Լիցենզիա**՝ Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն իրականացնելու վերջինիս իրավունքն ու պարտականությունը.

4) **Շուկայի կանոններ**՝ Հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար փաստաթուղթ, որով կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական համակարգում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները, համակարգի հուսալիության և անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմները.

5) **Ֆորս-մաժոր**՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ԼԻՑԵՆԶԻԱՑԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2017 թվականի հոկտեմբերի 30-ից:

3. Լիցենզիան գործում է մինչև 2034 թվականի սեպտեմբերի 13-ը, որից՝

1) մինչև 2019 թվականի սեպտեմբերի 13-ը կառուցման ժամանակահատվածն է,

2) մինչև 2034 թվականի սեպտեմբերի 13-ը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:

4. Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ժամանակահատվածը (ժամկետը) երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Արցախի Հանրապետության Հաղրուբի շրջանի Մեծ Թաղեր համայնքի վարչական տարածքն է՝ Իշխանագետի վրա (բնական ջրահոսք):

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 0,420 մեգավատտ հաշվարկային հզորությամբ «ՏՈՒՄ» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:

5. ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՅԱՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- 1) ջրառի և ջրահեռացման նիշերն են՝ 761,0 մ և 693,0 մ,
- 2) հաշվարկային ելք՝ 0,11-1,03 մ³/վ,
- 3) հաշվարկային ճնշում՝ 54,5-66,8 մ,
- 4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 0,420 մեգավատտ:

8. Լիցենզիայի գործողության ընթացքում «ՏՈՒՄ» փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

9. «ՏՈՒՄ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտից հետո էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվելու է հետևյալ սարքավորումներով՝

- 1) գեներատորներ,
- 2) հիդրոտուրբիններ:

6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարելու, զիջելու կամ այլ կերպ փոխանցելու մեկ այլ անձի:

12. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

14. Լիցենզավորված անձը լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր դառնալու կամ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ միավորվելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

15. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը նույն կամ մեկ այլ լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս ձեռք բերելու կամ փայտամասնակցություն ունենալու, ինչպես նաև 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր վաճառելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

16. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու օրվանից 15 աշխատանքային օր առաջ Լիցենզավորված անձն այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

17. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Արցախի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների, էներգատեղակայանքների և զծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:

21. Բացառությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների եզրակացությունների (ակտերի), Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը)՝ եզրակացությունների (ակտերի) ստացման պահից 23 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

26. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցելու, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

27. Այն դեպքում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Լիցենզավորված անձի կամ այլ անձանց կողմից ներկայացված որևէ հայտ, հարցադրում կամ դիմում-բողոք, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հաղորդագրություն կամ տեղեկատվություն, Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի պահանջով, պարտավոր է ներկայացնել սպառիչ տեղեկատվություն:

28. Լիցենզավորված անձը պարտավոր է տասն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

29. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2018 թվականի սեպտեմբերի 1-ը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «ՏՈՒՄ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագիծը և նախահաշիվը, նախագծի տեխնիկական և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ

նախատեսված դեպքերում՝ շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննությունները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգի համաձայն ստացված՝ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալու տեխնիկական պայմանների պատճենը:

30. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ՝ համաձայն Արցախի Հանրապետության օրենսդրության և առաքել էլեկտրական էներգիան էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձին:

31. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև Լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

32. Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի սակագները սահմանում է Հանձնաժողովը: Մակագների սահմանումն ու վերանայումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

33. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հանձնաժողով ներկայացնելու այդ մասով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

34. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված էներգամատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին կամ պարտադիր պայմաններին: Այդ պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

35. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՏՎՈՒՄԸ

36. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

37. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

38. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

39. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ներքին կանոնակարգը և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8. ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ

40. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

1) նախազգուշացում.

2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ.

3) Լիցենզիայի գործողության կասեցում.

4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

41. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի

մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

42. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ Լիցենզիայի 40-րդ կետի համաձայն, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս-մաժորի հետևանք են:

9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

43. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

44. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ Լիցենզիայի վերաձևակերպման համար:

Ի վկայություն սույնի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը սույն Լիցենզիան տրամադրել է՝

«ՏՈՒՄ-ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
(ընկերության անվանումը)

Ա.Հ. ք. Հաղբուք, Ծաղկոցի փ., 2. 7, բն. 2
(գտնվելու վայրը)

Գործունեության վայրը.

Արցախի Հանրապետության Հաղբուքի շրջանի Մեծ Թաղեր համայնքի վարչական տարածքն է:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» նոյեմբերի 2017

թվականի N 57-Ա

ք. Ստեփանակերտ

**«ՄԱՀՄԱՆ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
«ՄԱՀՄԱՆ» ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ
ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱՂՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ
ՏՐԱՄԱՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետը, 17-19-րդ, 29-րդ հոդվածները, 2017 թվականի սեպտեմբերի 28-ի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «ՄԱՀՄԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2017 թվականի նոյեմբերի 1-ին ներկայացված հայտը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. «ՄԱՀՄԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Հակ համայնքի տարածքում՝ Աղավնո գետի 1698,5 մետրից 1681,0 մետր գետահատվածքներում (բնական ջրահոսք)՝ «Սահման» փոքր հիդրոէլեկտրակայանում, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2033 թվականի հոկտեմբերի 1-ը գործողության ժամկետով, որը ներառում է արտադրական հզորությունների 2016 թվականի փետրվարի 12-ի N 0003 լիցենզիայի գործունեության կառուցման ժամանակահատվածը՝ 2016 թվականի փետրվարի 12-ից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը:

2. «ՄԱՀՄԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ երկշաբաթյա ժամկետում, «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունվարի 24-ի N 652-495 գրությամբ ՇԲԵՆ17/03-38 երաշխիքով սահմանված 927 500 (ինը հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի կեսը՝ 463 750 (չորս հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամը, փոխանցել Արցախի Հանրապետության պետական բյուջե (կենտրոնական գանձապետարան 915005166169) և փոխանցումը հավաստող փաստաթղթի բնօրինակը ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով:

2) մեկամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով ներկայացնել 927 500 (ինը հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 16-ը գործողության ժամկետով:

3. Հաստատել «ՄԱՀՄԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Սահման» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2017 թվականի նոյեմբերի 20-ի N 57-Ա որոշման

**«ՄԱՀՄԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
«Մահման» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի
(հզորության) արտադրության լիցենզիայի**

Պայմանները

(Լիցենզիա 0008, տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 57-Ա որոշմամբ)

1. ԼԻՑԵՆԶԻԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն լիցենզիայում օգտագործված հասկացություններն են.

1) **Հանձնաժողով`** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

2) **Լիցենզավորված անձ`** «ՄԱՀՄԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.

3) **Լիցենզիա`** Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն իրականացնելու վերջինիս իրավունքն ու պարտականությունը.

4) **Շուկայի կանոններ`** Հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար փաստաթուղթ, որով կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական համակարգում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները, համակարգի հուսալիության և անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմները.

5) **Ֆորս-մաժոր`** արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման` հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի` խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2017 թվականի նոյեմբերի 20-ից:

3. Լիցենզիան գործում է մինչև 2033 թվականի հոկտեմբերի 1-ը, որից՝

1) 2016 թվականի փետրվարի 12-ից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը կառուցման ժամանակահատվածն է,

2) մինչև 2033 թվականի հոկտեմբերի 1-ը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:

4. Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ժամանակահատվածը (ժամկետը) երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Հակ համայնքի վարչական տարածքն է՝ Աղավնո գետի 1698,5 մետրից 1681,0 մետր գետահատվածքներում (բնական ջրահոսք):

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅՑՆԵՐԸ

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 0,371 մեգավատտ հաշվարկային հզորությամբ «Սահման» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:

5. ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒՆԵԿՏՐԱԿԱՑԱՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՍԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1) ջրառի և ջրահեռացման նիշերն են՝ 1698,5 մ -1681,0 մ,

2) հաշվարկային ելք՝ 1,5 մ³/վ,

3) հաշվարկային ճնշում՝ 30,2 մ,

4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 0,371 մեգավատտ:

8. Լիցենզիայի գործողության ընթացքում «Սահման» փոքր հիդրո-էլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

9. «Սահման» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտից հետո էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվելու է հետևյալ սարքավորումներով՝

1) գեներատորներ,

2) հիդրոտուրբիններ

6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարելու, զիջելու կամ այլ կերպ փոխանցելու մեկ այլ անձի:

12. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

14. Լիցենզավորված անձը լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր դառնալու կամ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ միավորվելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

15. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը նույն կամ մեկ այլ լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս ձեռք բերելու կամ փայլամասնակցություն ունենալու, ինչպես նաև 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր վաճառելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

16. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու օրվանից 15 աշխատանքային օր առաջ Լիցենզավորված անձն այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

17. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համա-պատասխանությունը Արցախի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների, էներգատեղակայանքների և զծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:

21. Բացառությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների եզրակացությունների (ակտերի), Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը)՝ եզրակացությունների (ակտերի) ստացման պահից 23 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

26. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցելու, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

27. Այն դեպքում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Լիցենզավորված անձի կամ այլ անձանց կողմից ներկայացված որևէ հայտ, հարցադրում կամ դիմում-բողոք, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հաղորդագրություն կամ տեղեկատվություն, Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի պահանջով, պարտավոր է ներկայացնել սպառիչ տեղեկատվություն:

28. Լիցենզավորված անձը պարտավոր է տասն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

29. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2018 թվականի մարտի 1-ը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «Սահման» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագիծը և նախահաշիվը, նախագծի տեխնիկական և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննությունները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգի համաձայն ստացված՝ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալու տեխնիկական պայմանների պատճենը:

30. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ՝ համաձայն Արցախի Հանրապետության օրենսդրության և առաքել էլեկտրական էներգիան էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձին:

31. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև Լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

32. Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի սակագները սահմանում է Հանձնաժողովը: Սակագների սահմանումն ու վերանայումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

33. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հանձնաժողով ներկայացնելու այդ մասով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

34. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված էներգամատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին կամ պարտադիր պայմաններին: Այդ պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

35. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՄԱՐՄԱՆ

36. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

37. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

38. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

39. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ներքին կանոնակարգը և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8. ՏՈՒՇԱՆՔՆԵՐԸ

40. Լիցենզավորված անձի կողմից «էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

1) նախազգուշացում.

2) «էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ.

3) Լիցենզիայի գործողության կասեցում.

4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

41. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

42. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ Լիցենզիայի 40-րդ կետի համաձայն, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս-մաժորի հետևանք են:

9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

43. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

44. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ Լիցենզիայի վերաձևակերպման համար:

Ի վկայություն սույնի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը սույն Լիցենզիան տրամադրել է՝

«ՄԱՀՄԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

(ընկերության անվանումը)

ԱՀ, ք. Բերձոր, 5-րդ թաղամաս, տուն 78

(գտնվելու վայրը)

Գործունեության վայրը.

Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Հակ համայնքի վարչական տարածք՝ Աղավնո գետի 1698,5 մետրից 1681,0 մետր գետահատվածքներ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՄԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» նոյեմբերի

2017 թվականի N 58-Ա

ք. Ստեփանակերտ

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
«ԼԵՎ-1» ՓՈՔԸ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍՏԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻՆ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ)
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետը, 17-19-րդ, 29-րդ հոդվածները, 2017 թվականի սեպտեմբերի 28-ի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2017 թվականի հոկտեմբերի 25-ի հայտը և ի լրումն հայտի՝ 2017 թվականի հոկտեմբերի 31-ի գրությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը տրամադրել Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Չափնի բնակավայրի մոտ՝ Թարթառ գետի ձախակողմյա վտակ Լև գետի 1448,0 մետրից 1308,5 մետր գետահատվածքների միջև (բնական ջրահոսք)՝ «ԼԵՎ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2033 թվականի դեկտեմբերի 15-ը գործողության ժամկետով, որը ներառում է արտադրական հզորությունների 2016 թվականի հունվարի 27-ի N 0001 լիցենզիայի գործունեության կառուցման ժամանակահատվածը՝ 2016 թվականի հունվարի 27-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:

2. Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության «ԼԵՎ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2017 թվականի նոյեմբերի 20-ի N 58-Ա որոշման

**«Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության «ԼԵՎ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում
էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի**

Պայմանները

(Լիցենզիա 0009, տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 58-Ա որոշմամբ)

1. ԼԻՑԵՆԶԻԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն լիցենզիայում օգտագործված հասկացություններն են.

1) **Հանձնաժողով`** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

2) **Լիցենզավորված անձ`** «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերություն.

3) **Լիցենզիա`** Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն իրականացնելու վերջինիս իրավունքն ու պարտականությունը.

4) **Շուկայի կանոններ`** Հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար փաստաթուղթ, որով կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական համակարգում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները, համակարգի հուսալիության և անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմները.

5) **Ֆորս-մաժոր`** արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման` հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի` խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2017 թվականի նոյեմբերի 20-ից:

3. Լիցենզիան գործում է մինչև 2033 թվականի դեկտեմբերի 15-ը, որից՝

1) 2016 թվականի հունվարի 27-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը կառուցման ժամանակահատվածն է,

2) մինչև 2033 թվականի դեկտեմբերի 15-ը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:

4. Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ժամանակահատվածը (ժամկետը) երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Չափնի բնակավայրի մոտ՝ Թարթառ գետի ձախակողմյա վտակ Լև գետի 1448,0 մետրից 1308,5 մետր գետահատվածքների միջև (բնական ջրահոսք) ընկած տարածքն է:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 7,027 մեգավատտ հաշվարկային հզորությամբ «ԼԵՎ-1» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:

5. ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒՄԵԿՏՐԱԿԱՑՄԱՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1) ջրառի և ջրահեռացման նիշերն են՝ 1448,0 մ - 1308,5 մ,

2) հաշվարկային ելք՝ 7,0 մ³/վ,

3) հաշվարկային ճնշում՝ 119,7 մ,

4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 7,027 մեգավատտ:

8. Լիցենզիայի գործողության ընթացքում «ԼԵՎ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

9. «ԼԵՎ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտից հետո էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվելու է հետևյալ սարքավորումներով՝

1) գեներատորներ,

2) հիդրոտուրբիններ:

6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարելու, զիջելու կամ այլ կերպ փոխանցելու մեկ այլ անձի:

12. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

14. Լիցենզավորված անձը լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայատեր դառնալու կամ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ միավորվելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

15. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայատերը նույն կամ մեկ այլ լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս ձեռք բերելու կամ փայամասնակցություն ունենալու, ինչպես նաև 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր վաճառելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

16. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու օրվանից 15 աշխատանքային օր առաջ Լիցենզավորված անձն այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

17. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Արցախի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների, էներգատեղակայանքների և զծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:

21. Բացառությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների եզրակացությունների (ակտերի), Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը)՝ եզրակացությունների (ակտերի) ստացման պահից 23 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

26. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցելու, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

27. Այն դեպքում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Լիցենզավորված անձի կամ այլ անձանց կողմից ներկայացված որևէ հայտ, հարցադրում կամ դիմում-բողոք, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հաղորդագրություն կամ տեղեկատվություն, Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի պահանջով, պարտավոր է ներկայացնել սպառիչ տեղեկատվություն:

28. Լիցենզավորված անձը պարտավոր է տասն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

29. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2018 թվականի մայիսի 1-ը, պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «ԼԵՎ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագիծը և նախահաշիվը, նախագծի տեխնիկական և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննությունները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգի համաձայն ստացված՝ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալու տեխնիկական պայմանների պատճենը:

30. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ՝ համաձայն Արցախի Հանրապետության օրենսդրության և առաքել էլեկտրական էներգիան էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձին:

31. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև Լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

32. Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի սակագները սահմանում է Հանձնաժողովը: Սակագների սահմանումն ու վերանայումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

33. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հանձնաժողով ներկայացնելու այդ մասով փոքր հիդրոէլեկտրակայանի

կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

34. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված էներգամատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին կամ պարտադիր պայմաններին: Այդ պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

35. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ

36. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

37. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

38. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչին:

39. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ներքին կանոնակարգը և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8. ՏՈՒՄԱՆՔՆԵՐԸ

40. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

1) նախազգուշացում.

2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ.

3) Լիցենզիայի գործողության կասեցում.

4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

41. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

42. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ Լիցենզիայի 40-րդ կետի համաձայն, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս-մաժորի հետևանք են:

9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

43. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

44. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ Լիցենզիայի վերաձևակերպման համար:

Ի վկայություն սույնի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը սույն Լիցենզիան տրամադրել է՝

«Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերություն

(ընկերության անվանումը)

ԱՀ, ք. Ստեփանակերտ, փ. Վ. Սարգսյան, թիվ 25^ա

(գտնվելու վայրը)

Գործունեության վայրը.

Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Չափնի բնակավայրի մոտ՝ Թարթառ գետի ձախակողմյա վտակ Լև գետի 1448.0 մետրից 1308.5 մետր գետահատվածքների միջև:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«3» նոյեմբերի 2017թ.

N 261-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՇՄԱՎՈՆ ՌԱՖԻԿԻ ՎԵԶԻՐՅԱՆԻՆ
ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Շմավոն Ռաֆիկի Վեզիրյանի դիմումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել 2015 թվականի սեպտեմբերի 28-ին թերապևտիկ և հոմեոպատիկ բժշկական օգնության և սպասարկման համար անհատ ձեռնարկատեր Շմավոն Ռաֆիկի Վեզիրյանին տրված թիվ Ա-XX-000294 լիցենզիան:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնին՝

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) անհատ ձեռնարկատեր Շմավոն Ռաֆիկի Վեզիրյանին տրված լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Կ.ԱԹԱՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«9» նոյեմբերի 2017թ.

N 267-Ա

ք.Ստեփանակերտ

**«ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԻՂԱ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ
ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Աիդա Հարությունյանի դիմումը

ՀՐԱՄՍՑՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել 2007 թվականի նոյեմբերի 2-ին դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ) իրականացնելու համար «Հարությունյան Աիդա» անհատ ձեռնարկատիրոջը տրված թիվ Ա-XX-000023 լիցենզիան:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնին՝

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) «Հարությունյան Աիդա» անհատ ձեռնարկատիրոջը տրված լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Կ.ԱԹԱՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«14» նոյեմբերի

2017թ. N 155

ք.Ստեփանակերտ

**ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԱՃԱՌՔԻ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ և 26-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 13-ի N 4 եզրակացությունը ու անհատ ձեռնարկատեր Արսեն Հարությունյանի 2017 թվականի նոյեմբերի 8-ին ներկայացրած լիցենզիա ստանալու մասին հայտը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Բավարարել անհատ ձեռնարկատեր Արսեն Հարությունյանի հայտն ու տրամադրել բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ ապահովել սույն հրամանի առաքումը Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

Ժ. ՄԻՋՈՑԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«04» դեկտեմբերի

2017թ. N 170

ք.Ստեփանակերտ

**ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԱՃԱՌՔԻ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ և 26-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N 5 եզրակացությունը ու անհատ ձեռնարկատեր Իննա Արզումանյան Ռաֆայելիի 2017 թվականի նոյեմբերի 15-ին ներկայացրած լիցենզիա ստանալու մասին հայտը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Բավարարել անհատ ձեռնարկատեր Իննա Արզումանյան Ռաֆայելիի հայտն ու տրամադրել բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ ապահովել սույն հրամանի առաքումը Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

Ժ. ՄԻՐԶՈՑԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՒՄ ՏՐԱՄԱՐԿՎԱԾ, ԴԱՐԱՐԵՑՎԱԾ ԵՎ ԿԱՍԵՑՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

h/h	Լիցենզավորված անձի անվանումը կամ անունը, ազգանունը	Լիցենզիայի		Գործունեության		Լիցենզիայի գործողության ժամկետը	Ծանոթություն
		համարը	տրման ամսաթիվը	տեսակը	իրականացման վայրը		
1	2	3	4	5	6	7	8
ՏՐԱՄԱՐՈՒՄ							
1	ԱԶ Արթուր Յաշայի Աղավելյան	ՏՕՆ005 78	13.10.2017 թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԼՂՀ	անժամկետ	
2	ԱԶ Սուրեն Արտյուշի Ավետիսյան	ՏՕՆ005 79	13.10.2017 թ.		ԼՂՀ	անժամկետ	
3	ԱԶ Մխիթար Վալերիկի Զաքարյան	ՏՕՆ005 80	13.10.2017 թ.		ԼՂՀ	անժամկետ	
4	ԱԶ Ռուդիկ Գեորգիի Օհանյան	ՏՕՆ005 81	13.10.2017 թ.		ԼՂՀ	անժամկետ	
5	ԱԶ Սերգեյ Բերյոժի Գրիգորյան	ՏՕՆ005 82	13.10.2017 թ.		ԼՂՀ	անժամկետ	
ԴԱՐԱՐԵՑՈՒՄ							
1	ԱԶ Բորիկ Մանուկյան	ՏՕՆ004 16	19.11.2014 թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԼՂՀ	անժամկետ	13.10.2017 թ.
2	Սասուն Կիմի Բաղդասարյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ005 62	09.06.2017 թ.		ԼՂՀ	անժամկետ	
3	ԱԶ Արա Գրիգորյան	ՏՕՆ001 40	12.09.2011 թ.		ԼՂՀ	անժամկետ	01.10.2017 թ.
4	ԱԶ Սասուն Սարգսյան	ՏՕՆ003 28	30.09.2013 թ.		ԼՂՀ	անժամկետ	10.10.2017 թ.
ԿԱՍԵՑՈՒՄ							
1	Սամսոն Միմոնյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ004 50	21.10.2015 թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԼՂՀ	անժամկետ	կասեցվել է 22.10.2017 թ.
2	ԱԶ Վահրամ Կամոյի Ավանեսյան	ՏՕՆ005 12	31.10.2016 թ.		ԼՂՀ	անժամկետ	կասեցվել է 01.11.2017 թ.

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
2017 թվականի հոկտեմբեր ամսվա համար

ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն

N N	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի սերիան և համարը	Լիցենզավորված գործունեության տեսակը	Լիցենզիայի վերաձև ակերպում		Լիցենզիայի գործողության ժամկետը (նշել երկարաժամկետի ավարտման ամսաթիվը)	Լիցենզիայի, թույլտվության արտոնագրի կասեցում		Լիցենզիայի գործունեության դադարեցման կամ թույլտվությունից արտոնագրից ձեռք հանում/վերստանալու ամսաթիվը
	Անվանումը	ՀՎՀՀ			Որոշման ամսաթիվը	Նոր անվանումը		կասեցման մասին որոշման կամ դեպքի ամսաթիվը	կասեցումը հասելու մասին որոշման ամսաթիվը	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
1	«ԷՆԵՐԳՈ» ԱԿ ք.Ստեփան. Վ.Վաղարշյան 50/9	900053 52	ՇԻ-106	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				20.10.217		
2	«ԿԱՂԱՎՈՐ» ՍՊԸ ք.Ստեփ. Աջափնյա 2	900034 42	ՇԻ-260	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>տրանսպորտային</i>				29.10.2017		
3	«ԿՈՆՏՐԱԿՏ» ՍՊԸ ք.Ստեփ. Գյուրջան 23ա	900019 45	ՇԻ-331	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				04.10.2017		
4	«Խեսի - Ռա» ՍՊԸ ք.Ստեփ. Վ. Սամիկոնյան 13 ^ա /16	900248 61	ՔՓ Մ-490	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				19.10.2017		
5	«ԿՈՆՏԱԿՏ» ՍՊԸ ք.Ստեփ. Հ. Հակոբյան 25	900108 76	ՇԻ-885	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				17.10.2017		
6	«Էրիկ Վերդիյան» ԱՁ ք.Ստեփ. Ադմ Իսակով փող, շենք 5/30	904683 55	ՔՓՄ-950	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				21.10.2017		
7	«ՀԱՅԿ ԵՎ ՆԱՐԵԿ» ՍՊԸ ք.Ստեփ. Ս. Դավթի փողոց 52/18	900340 73	ՇԻ-951	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>տրանսպորտային</i>				21.10.2017		
8	«ԱՐՄ - ԱԻԴ ՏՐԱՆՍ» ՍՊԸ ԼՂՀ, Քաղաքաշինության շրջան, ք Բերձոր, 1-ին թաղ, շենք 110	100039 46	ՇԻ-952	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				28.10.2017		
9	«ԽԱՉԵՆ» ՓԲԸ ք.Ստեփ. Ա. Առաքելյանի 1	900032 61	ՇԻ-402	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				12.07.2017		
10	«ՆԱՐԵԿ» ՍՊԸ ք.Ստեփ. Բաղրամյան 3/31	900126 23	ՇԻ-734	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				23.06.2017		
11	«ԿՈՆՏՈՒՐ» ՍՊԸ ք.Ստեփ, Սասունցի Դավիթ փ. շ 56/29	900376 81	ՔՓ Մ-913	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և</i>				15.10.2016		

				<i>արտադրական</i>						
1 2	«ՖՈՐ ԴԻՐԵԿՇՆՍ» ՍՊԸ ք. Ստեփ. Սասունցի Դավիթ 15	900235 76	ՔՓ Մ- 681	Քաղաքաշինության փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի,</i> <i>հասարակական և</i> <i>արտադրական</i>					13.10. 2017	
1 3	«ԺԱՌԱՆԳՈՐԴ»ԱԿ ԼՂՀ Ասկերանի շրջ. գ. Նորագյուղ	900738 54	ՇԻ- 619	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի,</i> <i>հասարակական և</i> <i>արտադրական</i>					20.10. 2017	
1 4	«ԱՎՅՈՒՆ» ՍՊԸ ք. Ստեփ. Գ. Նժդեհ, տուն 24	900387 45	ՇԻ- 941	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի,</i> <i>հասարակական և</i> <i>արտադրական</i>					24.10. 2017	
1 5	«ՍՈՖԵՆԱ» ՍՊԸ ք. Ստեփ. Վ. Սարգսյան 11/36	900162 97	ՇԻ- 473	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի,</i> <i>հասարակական և</i> <i>արտադրական</i>					15.08. 2017	